

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ

**Միջանկյալ Ֆինանսական հաշվետվություններ
2016թ չորրորդ եռամսյակի համար**

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն	2
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն	7
Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

**«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն
2016թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ**

Հազար դրամ	Ծնթ	31 դեկտեմբեր 2016թ	31 դեկտեմբեր 2015թ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14	4,516,514	4,159,002
Ոչ նյութական ակտիվներ		4,942.9	6,194
Ներդրումներ	15	13,963,750	13,963,750
Ոչ ընթացիկ կանխավճարներ	16	10,599,534	9,974,145
Տրված փոխառություններ			
Ժամկետային ավանդներ		12,202,183	485,540
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		41,286,924	28,588,631
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	17	1,391,906	1,018,672
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	18	418,906	740,816
Ընթացիկ հարկային ակտիվներ		14,002	226,592
Ժամկետային ավանդներ	19	7,103,354	4,855,276
Տրված փոխառություններ		-	12,197,392
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20	461,287.2	946,066
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		9,389,454.94	19,984,814
Ընդամենը ակտիվներ		50,676,379	48,573,445

*«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն
2016թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ*

Սեփական կապիտալ և պարտավորություններ

Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ	21	690,930	690,930
Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար		(720,000)	(720,000)
Չբաշխված շահույթ		50,228,814	48,128,498
Ընդամենը սեփական կապիտալ		50,199,744	48,099,428

Ոչ ընթացիկ պարտավորություններ

Հետաձգված հարկային պարտավորություն		156,558	156,558
Ակտիվներին վերաբերվող շնորհներ		32,450	68,510
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		189,008	225,068
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	22	287,627	248,949
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		287,627	248,949
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		50,676,379	48,573,445

*«Մարտիր երկաթի գործարան» ԲԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն
2016 թ. չորրորդ եռամսյակի համար*

Հազար դրամ	Ծնթգ	01/10/2016- 31/12/2016	01/01/2016 -31/12/2016	01/10/2015- 31/12/2015	01/01/2015- 31/12/2015
Հասույթ	8	1,817,385	6,566,169	1,753,564	13,376,828
Վաճառքի ինքնարժեք	9	(1,083,810)	(4,420,305)	(1,394,352)	(11,0445,034)
Համախառն շահույթ		733,575	2,145,864	359,212	1,931,794
Վարչական ծախսեր	10	(182,430)	(874,092)	(404,846)	(961,359)
Գործառնական այլ ծախսեր	11	(114,092)	(291,155)	(367,732)	(544,804)
Գործառնական այլ եկամուտներ		-	14,404	56,681	81,957
Գործառնական գործունեության արդյունքներ		4370,53	995,021	(356,685)	507,588
Ֆինանսական եկամուտներ	12	922,720	3,545,317	1,635,416	1,675,111
Ֆինանսական ծախսեր	12	(14,922)	(2,105,685)	(835,579)	(69,580)
Չուտ ֆինանսական եկամուտ		907,798	1,439,632	799,837	1,605,531
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		611,276	2,434,653	443,152	2,113,119
Շահութահարկի գծով ծախս	13	(83,633)	(334,347)	(50,747)	(474,992)
Շահույթ ժամանակաշրջանի համար		527,643	2,100,306	392,405	1,638,127
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-	-
Ընդամենը համապարփակ եկամուտ		527,643	2,100,306	392,405	1,638,127
Գլխավոր հաշվապահ	<i>Ա. Հակոբյան</i>				
Գլխավոր տնօրեն	<i>Կ. Հակոբյան</i>				

«Մարտիր երկաթի գործարան» ԲԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն
 2016թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար

Ցուցանիշի անվանումը	տող	Հաշվետու ժամանակաշրջան 2016					
		Գումար	այդ թվում				
			դրամարկդ		բանկային հաշիվներ		ԴՄՀ*
			դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	
1	2	3	4	5	6	7	8
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	10	946,066	3		767,503	178,560	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր							
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	20	7,814,481	86		7,814,394		
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	30	269,378	441		154,772	114,164	
	31						
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	40	8,083,859	528		7,969,166	114,164	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների էլքեր							
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	50	3,122,973	10,217		1,427,088	1,685,669	
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	60	872,304			828,581	43,723	
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	70	2,082,871	6,643		2,073,490	2,738	
Վճարումներ բյուջե	80	700,277			700,277		
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	90	7,477			7,477		
Գործառնական այլ գործունեությունից էլքեր, այդ թվում՝	100	431,502	70		419,721	11,710	
	101						
Ընդամենը գործառնական գործունեությունից էլքեր	110	7,217,403	16,930		5,456,633	1,743,840	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	120	866,456	(16,402)		2,512,533	(1,629,675)	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր							
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	130	4,960			4,960		
Ֆինանսական ակտիվներից գործառնություններից	140	3,959,579			431,515	3,528,064	
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	150	8,623			8,618	5	
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	160						
	161						
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	170	3,973,162			445,093	3,528,069	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների էլքեր							
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	180	462,431			407,857	54,574	
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	190	4,860,935			300,000	4,560,935	
Ներդրումային այլ գործունեությունից էլքեր, այդ թվում՝	200						
	201						
Ընդամենը ներդրումային գործունեությունից էլքեր	210	5,323,366			707,857	4,615,509	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	220	(1,350,205)			(262,765)	(1,087,440)	
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր							
Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր	320	(483,749)	(16,402)		2,249,768	(2,717,115)	
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ**	330	(1,030)				(1,030)	
Ներքին շարժեր**	340		17,500		(2,811,743)	2,794,243	
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	350	461,287	1,101		206,744	254,658	

Ցուցանիշի անվանումը	տող	Հաշվետու ժամանակաշրջան 2015					
		Գումար	այդ թվում				ԴՄՀ*
			դրամարկղ		բանկային հաշիվներ		
			դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	
1	2	3	4	5	6	7	8
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	2,087,313.7	450.7		1,406,652.7	680,210.3	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր							
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	16,407,644.8	517.0		4,757,063.1	11,650,064.7	
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	030	5,939,643.8	182.3		5,933,318.1	6,143.3	
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	040	22,347,288.6	699.3		10,690,381.2	11,656,208.0	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր							
Կուլտուրայի, ապրանքների ձեռք բերման գծով	050	17,054,094.6	12,472.9		15,322,351.2	1,719,270.5	
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	060	4,103,448.4	53.6		898,992.8	3,204,402.0	
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	070	2,008,901.9	7,425.6		1,998,380.3	3,096.0	
Վճարումներ բյուջե	080	1,226,746.2			1,226,746.2		
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	090	3,767.4			3,767.4		
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	100	669,735.2	195.0		662,753.8	6,786.4	
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	110	25,066,693.8	20,147.1		20,112,991.8	4,933,554.9	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	120	(2,719,405.2)	(19,447.7)		(9,422,610.6)	6,722,653.1	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր							
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	140	13,639,270.3			384,903.2	13,254,367.1	
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	150	142,960.3			142,265.0	695.4	
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	170	13,782,230.7			527,168.2	13,255,062.5	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր							
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	180	86,135.4			55,345.3	30,790.1	
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	190	5,267,100.0				5,267,100.0	
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	210	5,353,235.4			55,345.3	5,297,890.1	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	220	8,428,995.3			471,822.9	7,957,172.4	
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր							
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	270	6,846,156.4			143,416.4	6,702,740.0	
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	280	1,280.0			1,280.0		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	300	6,847,436.4			144,696.4	6,702,740.0	
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	310	(6,847,436.4)			(144,696.4)	(6,702,740.0)	
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	320	(1,137,846.3)	(19,447.7)		(9,095,484.1)	7,977,085.5	
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ**	330	(4,516.5)				(3,959.0)	
Ներքին շարժեր**	340		19,000.0		8,455,777.2	(8,474,777.2)	
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	350	946,066	2.9		766,945.9	178,559.7	

*«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ
Սեփական կապիտալի փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն
2016թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար*

Հազար դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	690,930	48,128,498	(720,000)	48,099,428
Շահույթ 2016թ դեկտեմբերի 31- ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	2,100,306	-	2,100,306
Ընդամենը համապարփակ ֆի- նանսական արդյունք 2016թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	2,100,306	-	2,100,306
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ին դրությամբ	690,930	50,228,804	(720,000)	50,199,734

Հազար դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ	690,930	46,490,371	-	47,181,301
Շահույթ 2015թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	1,638,127	-	1,638,127
Ընդամենը համապարփակ ֆի- նանսական արդյունք 2015թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	1.638.127	(720, 000)	1.638.127
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	690,930	48,128,498	(720, 000)	48,099,428

1. Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչն, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Հիմնական գործունեությունը

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ն (Ընկերություն) 1968թ-ին հիմնադրված «Մաքուր երկաթի փորձարդյունաբերական գործարանի» իրավահաջորդն է: 1995թ-ին Ընկերությունը վերակազմավորվել է «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի:

Ընկերության հիմնական գործունեությունը ֆերոմոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի արտադրությունն է, որոնք վաճառվում են արտերկրում: 2015թ-ից Ընկերությունը սկսել է մատուցել մոլիբդենի խտանյութի վերամշակման ծառայություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արցախի պող. 75:

Ընկերությունն իր գործարքների մեծամասնությունն իրականացնում է կապակցված կողմերի հետ: Արդյունքում, Ընկերությունը տնտեսապես կախված է կապակցված կողմերից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության

կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատումների հետ կապված անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների էական ճշգրտման ռիսկ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություններ 15-ում և 24-ի (ա) կետում:

Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս՝ Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի չափման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություններ 15-ում և 24-ի (ա) կետում:

5. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների և ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

6. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Մտորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Ասոցիացված կազմակերպություն

Ասոցիացված կազմակերպություններ են հանդիսանում այն կազմակերպությունները, որոնց ֆինանսական և գործառնական քաղաքականության նկատմամբ Ընկերությունն ունի նշանակալի ազդեցություն, սակայն՝ ոչ վերահսկողություն: Ընկերության կողմից նշանակալի ազդեցություն ենթադրվում է այն դեպքում, երբ Ընկերությանն են պատկանում այլ կազմակերպության քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի 20%-ից 50%-ը:

Ասոցիացված կազմակերպություններում ունեցած բաժնեմասերը հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով, և վերջիններիս սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով: Ներդրման սկզբնական արժեքը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառում են բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների շահույթում կամ վնասում և այլ ֆինանսական արդյունքներում Ընկերության բաժնեմասն այն ճշգրտումներից հետո, որոնք իրականացվում են ներդրման օբյեկտների հաշվապահական հաշվառման քաղաքականությունն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ համապատասխանեցնելու համար՝ այն ամսաթվից, երբ Ընկերությունը սկսում է նշանակալի ազդեցություն ունենալ մինչև այն ամսաթիվը, երբ դադարում է նշանակալի ազդեցություն ունենալ: Ներդրման հաշվեկշռային արժեքի գծով կատարվում են ճշգրտումներ՝ ձեռքբերման ամսաթվից ասոցիացված կազմակերպության գուտ ակտիվներում Ընկերության բաժնեմասի փոփոխությունները ճանաչելու համար: Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների հետ իրականացվող գործարքներից առաջացող չիրացված օգուտը բացառվում է ներդրման դիմաց ներդրման օբյեկտում Ընկերության բաժնեմասի չափով: Չիրացված վնասը բացառվում է նույն եղանակով ինչպես չիրացված օգուտը, սակայն այնքանով, որքանով բացակայում է արժեզրկման վկայություն:

Բաժնեմասնակցության մեթոդը կիրառելուց հետո, Ընկերությունը որոշում է, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել արժեզրկումից կորուստ ասոցիացված կազմակերպությունում կատարած ներդրման գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք առկա է ասոցիացված կազմակերպությունում կատարած ներդրման արժեզրկման անկողմնակալ վկայություն: Նման վկայության դեպքում, Ընկերությունը հաշվարկում է արժեզրկման գումարը՝ որպես փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերություն:

(բ) Հասույթ

Վաճառված ապրանքներ

Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսումներն ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների:

Սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցման ժամկետը կախված է առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից: Ֆերոմոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի համար փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ արտադրանքը մաքսագերծվում է մաքսատանը՝ արտահանման նպատակով:

Ընկերության ֆերոմոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սփոթ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, ֆերոմոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո:

Ընկերության պայմանականորեն գնանշվող վաճառքի պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է վերջնահաշվարկի գինը ճշգրտված ապագա գնով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես դեբիտորական պարտք կամ ստացված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) հասույթի միջոցով:

Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանին համամասնորեն: Գործարքի ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա:

(գ) Ֆինանսական եկամուտ և ծախս

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- ներդրված միջոցների և տրամադրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտը,
- շահաբաժինների գծով եկամուտը,
- փոխառության ծախսումների գծով տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահաբաժինների գծով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ամսաթվին, երբ հաստատվում է վճարում ստանալու Ընկերության իրավունքը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով

որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ գուտ շահույթի կամ գուտ վնասի:

(դ) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ոչ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(զ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի

հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

(է) Պաշարներ և վաճառքի ինքնարժեք

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը՝ մուտք, առաջինը՝ ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Ընկերության մոլիբդենի խտանյութի գնման պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սփոթ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի միջին շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, մոլիբդենի խտանյութի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո:

Ընկերության պայմանականորեն գնանշվող գնման պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է վերջնահաշվարկի գինը ճշգրտված ապագա գնով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես կրեդիտորական պարտք կամ վճարված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) վաճառքի ինքնարժեքի միջոցով:

(ը) Այլ ծախսեր

Սոցիալական ծրագրերի գծով ծախսումներ

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Ընկերության հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Ընկերության աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(թ) Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- շենքեր 12-ից 40 տարի
- մեքենա-սարքավորումներ 5-ից 20 տարի
- փոխադրամիջոցներ 2-ից 9 տարի
- տնտեսական գույք 1-ից 5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ժ) Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի ու վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերին:

Ընկերությունը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում

Ընկերությունը փոխառությունները և դեբիտորական պարտքերի սկզբնապես ճանաչումն իրականացնում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվ իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Ընկերությունն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Ընկերության ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեքկումից կորուստները:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասը ներառում է տրված փոխառությունները, առևտրական դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները և դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ միջոցները և ընթացիկ բանկային հաշիվները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այն ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն ֆինանսական գործիքների այլ դասին: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունները, բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներկայացվում են սեփական կապիտալում՝ իրական արժեքի պահուստում: Երբ ներդրումն ապաճանաչվում կամ արժեզրկվում է, սեփական կապիտալում կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի: Չգնանշվող բաժնային գործիքները, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հաշվառվում են սկզբնական արժեքով:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում

Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառություններն ու առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ընկերությունն ունի պարունակվող ածանցյալ ֆինանսական գործիքներ, որոնք վերաբերում են մոլիբդենի խտանյութի առքի և ֆերոմոլիբդենի ու եռակալված մետաղական մոլիբդենի վաճառքի գործարքներին:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և դրա փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Պարունակվող ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի ու հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն, առանձին գործիքը, որի պայմանները նման են պարունակվող ածանցյալ գործիքի պայմաններին, բավարարում է ածանցյալ գործիքի սահմանմանը, և համակցված գործիքը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Առանձնացվող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

(ի) Բաժնետիրական կապիտալ

Մովորական բաժնետոմսեր

Մովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Մովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

(1) Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերի) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել՝

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները,
- փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ,
- ակտիվ շուկայի վերացումն արժեթղթի համար կամ
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին:

Բացի այդ, բաժնային արժեթղթերում կատարած ներդրումների համար արժեզրկման անկողմնակալ վկայություն է համարվում իրական արժեքի էական կամ երկարաձգված նվազումը սկզբնական արժեքից:

Անորոշագույն արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն այս ակտիվների արժեզրկման վկայությունը դիտարկում է թե՛ առանձին և թե՛ հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվների արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս՝ Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և պարտքային պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա պատմական տվյալներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի՝ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում և արտացոլվում է պահուստային հաշվում: Եթե Ընկերությունը գտնում է, որ չկա ակտիվը վերականգնելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Ընկերությունը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի ծախսագրման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են սեփական կապիտալում իրական արժեքի պահուստի ծով կուտակված վնասը վերադասակարգելով շահույթի կամ վնասի: Կուտակված վնասը, որը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդի կիրառմանը վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ: Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեքի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեքի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներառում են չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ վերջիններիս իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե գոյություն ունի նման ներդրումների արժեզրկման անկողմնական վկայություն, արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույթով զեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Նման ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

Բաժնենամանակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտներ

Բաժնենամանակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտի գծով արժեզրկումից կորուստը չափվում է համեմատելով ներդրման փոխհատուցվող գումարը վերջինիս հաշվեկշռային արժեքի հետ: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել նպաստավոր փոփոխություն փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատականներում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույթը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են՝ դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ա) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ջեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(ծ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Ընկերությունը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նուսրացված շահույթի մասին տեղեկատվություն իր սովորական բաժնետոմսերի համար: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Ընկերության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտումով: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթը հաշվարկելու նպատակով Ընկերությունը ճշգրտում է իր սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին թիվը՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտումով՝ բոլոր նուսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելու համար:

(կ) Սեզմնտային հաշվետվություններ

Գործառնական սեզմնտը Ընկերության այն բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր, ներառյալ Ընկերության այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը: Բոլոր գործառնական սեզմնտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Խորհրդի կողմից՝ սեզմնտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով:

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բաղկացած է մեկ գործառնական սեզմնտից:

(հ) Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները նվազագույնը ներառում են հետևյալ բաղկացուցիչները՝

- ա) ֆինանսական վիճակի մասին խտացված հաշվետվություն,
- բ) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին խտացված հաշվետվություն,
- գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին խտացված հաշվետվություն.

դ) դրամական միջոցների հոսքերի մասին խտացված հաշվետվություն.

ե) ընտրված բացատրական ծանոթագրություններ:

Ընկերությունը իր միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում առնվազն ներառում է հետևյալ տեղեկատվությունը, եթե դրանք էական են և չեն բացահայտվել միջանկյալ ֆինանսական հաշվետվության որևէ այլ հատվածում: Տեղեկատվությունը սովորաբար ներկայացվում է «ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը» հիմունքով: Այնուամենայնիվ, կազմակերպությունը բացահայտում է նաև բոլոր այնպիսի դեպքերը կամ գործարքները, որոնք էական են՝ ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանն ընկալելու համար:

ա) հայտարարություն այն մասին, որ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կիրառվել են հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը և հաշվարկման մեթոդները, որոնք կիրառվել էին ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվություններում, կամ, եթե այդ քաղաքականությունը կամ մեթոդները փոփոխվել են, ապա այդ փոփոխությունների բնույթի և ազդեցության նկարագրությունը.

բ) միջանկյալ գործառնությունների սեզոնային կամ ցիկլային բնույթի վերաբերյալ բացատրական մեկնաբանություններ.

գ) այն հոդվածների բնույթը և գումարը, որոնք ազդում են ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, զուտ ֆինանսական արդյունքի կամ դրամական միջոցների հոսքերի վրա, և որոնք սովորական չեն իրենց բնույթի, չափի և երևան գալու հավանականության պատճառով.

դ) ընթացիկ ֆինանսական տարվա նախորդ միջանկյալ ժամանակաշրջանների հաշվետվություններում ներկայացված գումարների գնահատումներում փոփոխությունների, կամ նախորդ ֆինանսական տարիների հաշվետվություններում ներկայացված հոդվածների գնահատումներում փոփոխությունների բնույթը և գումարը, եթե այդ փոփոխությունները էական ազդեցություն ունեն ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանում.

ե) պարտքային և բաժնային արժեթղթերի թողարկումները, հետգումումները և մարումները.

զ) վճարված շահաբաժինները (ամբողջությամբ կամ մեկ բաժնետոմսի կտրվածքով) առանձին՝ սովորական և այլ բաժնետոմսերի գծով.

է) հետևյալ սեզոնային տեղեկատվությունը (կազմակերպության միջանկյալ ֆինանսական հաշվետվությունում սեզոնային տեղեկատվության բացահայտումը պահանջվում է, միայն եթե ՖՀՄՍ 8 «Գործառնական սեզոններ» ստանդարտը պահանջում է, որ այդ կազմակերպությունն իր տարեկան ֆինանսական հաշվետվություններում բացահայտի սեզոնային տեղեկատվությունը՝

ը) միջանկյալ ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած էական դեպքերը, որոնք չեն արտացոլվել միջանկյալ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում.

թ) միջանկյալ ժամանակաշրջանի ընթացքում կազմակերպության կառուցվածքի փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ ձեռնարկատիրական գործունեության միավորումները, դուստր ընկերությունների և երկարաժամկետ ներդրումների վերահսկման իրավունքների ձեռքբերումն ու կորուստը, վերակառուցումները և ընդհատված գործառնությունները: Ձեռնարկատիրական գործունեության միավորումների դեպքում կազմակերպությունը բացահայտում է ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտով պահանջվող տեղեկատվությունը.

(ժ) պայմանական պարտավորությունների կամ պայմանական ակտիվների փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել վերջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո:

Միջանկյալ հաշվետվությունները ներառում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (խտացված կամ ամբողջական) հետևյալ ժամանակաշրջանների համար՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ և համեմատական ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն անմիջապես նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ.

բ) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի համար և ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի համար՝ աճողական, և համեմատական ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանների (ընթացիկ և տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը) համար: Ինչպես թույլատրված է ՀՀՄՍ 1-ով, յուրաքանչյուր ժամանակաշրջանի միջանկյալ հաշվետվություն կարող է իրենից ներկայացնել կամ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն, կամ շահույթի կամ վնասի բաղադրիչները ցուցադրող հաշվետվություն (առանձին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) և մի երկրորդ հաշվետվություն, որը սկսվում է շահույթից և վնասից և ցուցադրում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների բաղադրիչները (համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի համար՝ աճողական, և համեմատական հաշվետվությունը անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի (տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը) համար:

դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի համար՝ աճողական, և համեմատական հաշվետվությունը անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի (տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը) համար:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կազմակերպությունը կիրառում է հաշվապահական հաշվառման նույն քաղաքականությունը, որը կիրառվում է նրա տարեկան ֆինանսական հաշվետվություններում՝ բացառությամբ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների, որոնք կատարվել են ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո և արտացոլվում են հաջորդ տարեկան ֆինանսական հաշվետվություններում: Այնուամենայնիվ, կազմակերպության հաշվետվությունների հաճախականությունը (տարեկան, կիսամյակային կամ եռամսյակային) չպետք է ազդի դրա տարեկան արդյունքների չափման վրա: Այդ նպատակին հասնելու համար միջանկյալ հաշվետվությունների պատրաստման նպատակով չափումները կատարվում են «տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը» հիմունքով:

7. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Ընկերության գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Նոր կամ փոփոխված ստանդարտ	Պահանջների ամփոփ նկարագիր	Հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
ՖՀՄՍ 9 <i>«Ֆինանսական գործիքներ»</i>	2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտի գործող ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը ներառում է վերանայված ուղեցույցներ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման համար, այդ թվում՝ ֆինանսական ակտիվների արժեզրկման հաշվարկի համար կիրառվող սպասվող վնասի նոր մոդելը, և հեջի ընդհանուր հաշվառմանը վերաբերող նոր պահանջները: Այն ներառում է նաև ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական գործիքների ճանաչման ու ապաճանաչման ուղեցույցները: ՖՀՄՍ 9- կգործի 2018թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:	Ընկերությունը գնահատում է ՖՀՄՍ 9-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

8. Հասույթ

հազ. դրամ	01/01/2016- 31/12/2016	01/01/2015- 31/12/2015
Հասույթ արտադրանքի վաճառքից	59,00	9,381,340
Հասույթ նատուցված ծառայություններից (նուլիբոնուսի խտանյութի վերամշակում)	6,566,111,00	3,995,488
Ընդամենը հասույթ	6,566,170,00	13,376,828,00

9. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	01/01/2016- 31/12/2016	31/12/15
Մուլիբոնուսի խտանյութ	-	6,482,049
Նյութեր	1,914,501	1,868,724
Գույքագրումից ծախսերի ճշտում	-109,431	109,431
Աշխատավարձ	1,535,324	1,581,502
Գազ	423,847	571,466
Էլեկտրականություն	320,738	491,498
Մաշվածություն	314,956	319,934
Զուր	17,079	16,703
Այլ	3,291	3,727
	4,420,304,85	11,445,034

10. Վարչական ծախսեր

հազ. դրամ	01/01/2016- 31/12/2016	01/01/2015- 31/12/2015
Աշխատավարձ	501,964	532,246
Մասնագիտական ծառայություններ	204,219	241,932
Մաշվածություն	37,213	44,658
Գործուղման	18,228	12,604
Գրասենյակային և կոմունալ	23,630	20,868
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	19,080	15,367
Այլ	69,758	94,684
	874,091,90	962,359

11. Այլ ծախսեր

հազ. դրամ	<u>01/01/2016- 31/12/2016</u>	<u>01/01/2015- 31/12/2015</u>
Նվիրատվություններ	143,109	221,917
Պարապուրդի գծով ծախսեր ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների մաշվածություն	37,698	-
	75,138	-
Այլ	<u>35,210</u>	<u>322,887</u>
	<u>291,155</u>	<u>544,804</u>

12. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	<u>01/01/2016- 31/12/2016</u>	<u>01/01/2015- 31/12/2015</u>
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ	1,428,648	1,208,638
Օգուտ փոխարժեքային տարբերություններից Այլ	2,116,669	466,473
Ֆինանսական եկամուտ	<u>3,545,317</u>	<u>1,675,111</u>
Վնաս փոխարժեքային տարբերություններից Տոկոսային ծախս	2,105,685.35	-
Ֆինանսական ծախսեր	<u>0</u>	<u>-69,580</u>
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական եկամուտ	<u>-2,105,685</u>	<u>-69,580</u>
	<u>1,439,631</u>	<u>1,605,531</u>

13. Շահութահարկի գծով ծախս

**Շահույթում կամ վնասում
ճանաչված գումարներ**

Ընկերությունը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառելի 20% դրույքով:

հազ. դրամ	<u>01/01/2016- 31/09/2016</u>	<u>01/01/2015- 31/12/2015</u>
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ ժամանակաշրջան	(334,347)	(415,881)
	<u>(334,347)</u>	<u>(29,185)</u>
Հետաձգված հարկի գծով ծախս		
ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	156,558	29,926
Ընդամենը հարկի գծով ծախս	<u>156,558</u>	<u>(474,992)</u>

14. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Մեքենա- սարքավոր ումներ	Փոխադրա- միջոցներ	Տնտեսական գույք	Կառուց. հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	1,804,929	2,962,408	111,185	13,972	-	4,892,494
Ավելացումներ Օտարումներ և դուրսգրումներ	22,544	233,589	12,918	11,842	-	280,593
	<u>(7,027)</u>	<u>(50,367)</u>	<u>(1,697)</u>	<u>(628)</u>	-	<u>(59,719)</u>
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	<u>1,825,261</u>	<u>3,136,942</u>	<u>122,406</u>	<u>28,759</u>	-	<u>5,113,368</u>
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	1,825,261	3,136,942	122,406	28,759	-	5,113,368
Ավելացումներ Օտարումներ և դուրսգրումներ	247,685	243,721	28,211	47,492	260,050	827,159
	-	(34,676)	-	(5,225)	-	(39,901)
Փոխանցումներ	<u>-30,983</u>	<u>32,978</u>	<u>147</u>	<u>(2,142.)</u>	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2016թ.	<u>2,041,963</u>	<u>3,378,965</u>	<u>150,764</u>	<u>68,884</u>	260,050	<u>5,900,626</u>
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	(127,173)	(248,045)	(23553)	(12,328)	-	(427,584)
Մաշվածություն Օտարումներ և դուրսգրումներ	(63,994)	(286,552)	(30,117)	(7578)	-	(425,333)
	<u>7,027</u>	<u>65254</u>	<u>15,847</u>	<u>16,043</u>	-	<u>214,715</u>
Մնացորդը առ 31 դեկտեմբեր ի 2015թ.	<u>(185,894)</u>	<u>(469,343)</u>	<u>(37,823)</u>	<u>(3,863)</u>	-	<u>(638,202)</u>
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	(185,894)	(696,119)	(63,762)	(8,591)	-	(954,366)
Մաշվածություն Օտարումներ և դուրսգրումներ	(69,941)	(363,422)	(20,172)	(12,761)	-	(466,296)
	-	36,515	-	34	-	36,549
Փոխանցումներ	<u>8,101</u>	<u>(11,973)</u>	<u>(516)</u>	<u>4,388</u>	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2016թ.	<u>(247,734)</u>	<u>(1,034,999)</u>	<u>(84,450)</u>	<u>(16,930)</u>	-	<u>(1,384,113)</u>
Հաշվեկշռային արժեք						
Առ 31 դեկտեմբեր 2015թ.	<u>1,630,799</u>	<u>2,495,702</u>	<u>56,247</u>	<u>8,463</u>	-	<u>4,191,211</u>
Առ 31 դեկտեմբեր 2016թ.	<u>1,794,229</u>	<u>2,343,966</u>	<u>66,314</u>	<u>51,954</u>	260,050	<u>4,516,514</u>

15. Ներդրումներ

հազ. դրամ	31.12.2016թ.	31.12.2015թ.
Վաճառքի համար նատչելի ներդրումներ	13,603,010	13,603,010
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ «Մետաղագործ» ՓԲԸ	5,000	5,000
Բաժնեմաս ասոցիացված կազմակերպությունում «Հին Արենի» ՍՊԸ	355,740	355,740
	13,963,750	13,963,750

16. Ոչ ընթացիկ կանխավճարներ

հազ. դրամ	31.12.2016թ.	31.12.2015թ.
Մոլիբդենի խտանյութ գնելու համար տրված կանխավճարներ	10,535,663	9,971,469
Այլ կանխավճարներ	63,871	2,676
	10,599,534	9,974,145

17. Պաշարներ

հազ. դրամ	31.12.2016թ.	31.12.2015թ.
Հումք և սպառողական նյութեր	451,429	755,877
Պատրաստի արտադրանք	627,840	150,874
Անավարտ արտադրություն	117,543	-
Պահեստամասեր	14,288	19,751
Այլ	180,806	92,170
	1,391,906	1,018,672

18. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	30.09.2016թ.	31.12.2015թ.
Ընթացիկ Հարկերի գծով կանխավճարներ	232,827.00	363,439
Այլ կանխավճարներ	110.00	126,897
Առևտրական դեբիտորական պարտքեր	172,678.00	50,012
Այլ դեբիտորական պարտքեր	13,291.00	200,468
	418,906	740,816

19. Ժամկետային ավանդներ

հազ. դրամ	<u>31.12.2016թ.</u>	<u>31.12.2015թ.</u>
<i>Ոչ ընթացիկ ավանդներ</i>		
5 խոշորագույն հայկական բանկեր	-	485,540
	<u>-</u>	<u>485,540</u>
 <i>Ընթացիկ ավանդներ</i>		
5 խոշորագույն հայկական բանկեր	6,134,485	3,887,060
Այլ հայկական բանկեր	<u>968,869.00</u>	<u>968,216</u>
	<u><u>7,103,354</u></u>	<u><u>4,855,276</u></u>

20. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	<u>31.12.2016թ.</u>	<u>31.12.2015թ.</u>
Կանխիկը դրամարկղում	1,101.00	3
Բանկային հաշիվների մնացորդներ	<u>460,186.00</u>	<u>946,063</u>
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում	<u><u>461,287</u></u>	<u><u>946,066</u></u>

21. Կապիտալ և պահուստներ

(ա)

<i>Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ</i>	Սովորական բաժնետոմսեր	
	30.09.2016թ.	31.12.2015թ.
Հայտարարված բաժնետոմսեր	69,093	69,093
Անվանական արժեք	10,000 դրամ	10,000 դրամ
Սեպտեմբերի 30-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	69,093	69,093

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) **Շահաբաժիններ**

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2016թ. և 2015թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել:

22. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	31.12.2016թ.	31.12.2015թ.
Ստացված ծառայությունների համար վճարվելիք գումարներ	67,320.00	20,369
Պայմանականորեն գնանշվող վաճառքների համար ստացված կանխավճարներ	-	15,729
Հումքի ձեռքբերման համար վճարվելիք գումարներ	3,668.00	964
Այլ	85.00	28
Այլ ֆինանսական պարտավորությունների դասում ներառված առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	71,073	37,090
Վճարվելիք այլ հարկեր	126,435	106,691
Վճարվելիք աշխատավարձ	89,531	103,777
Այլ	588	1,390
Այլ վճարվելիք գումարներ	216,554	211,858
	287,627	248,948

1. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին, ինչը հիմնականում պայմանավորված է այս գործիքների կարճաժամկետ ժամկետայնությամբ:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս՝ Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կունենան իրենց դերի և պարտականությունների մասին:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Ընկերության հասույթի գերակշռող մասը վերագրելի է երեք կապակցված կողմի հետ իրականացվող վաճառքի գործարքներին: Նախկինում Ընկերությունը վնաս չի կրել այդ կողմերի հետ իրականացված գործարքներից: Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի համար:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները և ժամկետային ավանդները

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են խոշոր հայկական բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Տրված փոխառություններ

Ընկերության քաղաքականության համաձայն՝ փոխառությունները տրամադրվում են միայն կապակցված կողմերին և այդ փոխառությունների համար գրավ չի պահանջվում: Փոխառությունները ժամկետանց չեն, և ղեկավարությունն ակնկալում է, որ գումարները կմարվեն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է հնարավորինս ապահովել բավարար իրացվելիություն՝ բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակություն վտանգելու:

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Աղյուսակներում ներկայացված են համախառն և չգեղջված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

31 դեկտեմբերի 2016թ.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	71,073	71,073	71,073	-
	83,789	83,789	83,789	-

31 դեկտեմբերի 2015թ.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	37,090	37,090	37,090	-
	37,090	37,090	37,090	-

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամուտների կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով չեն համապատասխանում Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթները, որոնցով արտահայտված են վաճառքները, գումարները և փոխառությունները: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված	ԱՄՆ դոլարով արտահայտված
	31.12.2016թ.	31.12.2015թ.
Տրված փոխառություններ	12,202,183	12,197,392
Ոչ ընթացիկ կանխավճարներ	9,678,800	9,971,469
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	152,137
Ժամկետային ավանդներ	7,102,488	5,340,816
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	254,641	178,478
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	(15,729)
Զուտ ենթարկվածություն	29,238,112	27,824,563

Ժամանակաշրջանի ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Մինոք փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	01.01.2016թ.- 31.12.2016թ.	01.01.2015թ.- 30.09.2015թ.	31.12.2016թ.	31.12.2015թ.
	1 դոլար	480.32	477.75	483,94

Զգայունության վերլուծություն

Սեպտեմբերի 30-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	Արժևորում	Արժեզրկում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
30 սեպտեմբերի 2016թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	(2,923,812)	2,772,428
31 դեկտեմբերի 2015թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	(2,782,456)	2,782,456

Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների, ժամկետային ավանդների, տոկոսակիր կանխավճարների, վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով պարտք):

Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին

Ստորև ներկայացված են Ընկերության տոկոսակիր մնացորդները հաշվետու ամսաթվի դրությամբ՝
տոկոսադրույքների կարվածքով:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2016թ.	31.12.2015թ.
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ		
Ակտիվներ	19,304,671	17,538,208
	18,167,450	17,538,208
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ		
Ակտիվներ	10,535,663	9,971,469
	10,200,279	9,971,469

Դրամական միջոցների հոսքերի զգայունության վերլուծություն փոփոխական տոկոսադրույքով գործիքների համար

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունը 100 բազիսային կետով կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը (առանց հարկերի) ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	Շահույթ կամ վնաս	
	100 բլ ան	100 բլ նվազում
2016թ.		
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	105,357	-
Դրամական միջոցների հոսքերի զգայունություն (զուտ)	102,003	-
2015թ.		
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	99,715	-
Դրամական միջոցների հոսքերի զգայունություն (զուտ)	99,715	-

Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված տոկոսադրույքով գործիքների համար

Ընկերությունը չի հաշվառում ֆիքսված տոկոսադրույքով պարտքային ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

1. Կապակցված կողմեր

(ա) Վերահսկողություն

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է հանդիսանում Cronimet Ferrole GmbH-ը: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է Cronimet Holding GmbH-ը, որը վերահսկվում է Պիլարսկի ընտանիքի կողմից:

(բ) Գործարքներ առնացքային ղեկավար անձնակազմի հետ

Առաջին երեք եռամսյակների ընթացքում առնացքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

հազ. դրամ	<u>01.01.16թ. - 30.09.16թ.</u>	<u>01.01.15թ. - 30.09.15թ.</u>
Աշխատավարձ և պարգևատրումներ	<u>196,305</u>	<u>168,687</u>

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը		Մնացորդը առ	
	01.01.16թ. - 31.12.16թ.	01.01.15թ. - 31.12.15թ.	31 դեկտեմբերի 2016թ.	31 դեկտեմբերի 2015թ.
Արտադրանքի և ծառայությունների վաճառք				
Մայր կազմակերպություն		(105,736)	-	-
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	6,566,111	13,017,766	99,153	50,012
Նյութերի և ծառայությունների ձեռքբերում				
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ (նյութեր)	-	5,519,833	10,535,663	9,971,469
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ (ծառայություններ)	-	43,383	-	-
Այլ գործարքներ				
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	-	-	63,907	152,137

Նյութերի ձեռքբերման գործարքների մնացորդները վերաբերում են մոլիբդենի խտանյութի գնման համար տրված կանխավճարներին: Մատակարարման պայմանագրի համաձայն՝ խտանյութը պետք է մատակարարվի 2020թ-ից 2021թ. ընկած ժամանակաշրջանում: Տոկոսները գանձվում են մնացորդի գծով նախքան մատակարարումը՝ մեկ ամսվա Libor գումարած 4.95% տոկոսադրույքով: 2016թ-ի ընթացքում մնացորդի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 560,394 հազար դրամ:

հազ. դրամ	Տոկոսային եկամուտ		Մնացորդը առ	
	01.01.16թ. - 31.12.16թ.	01.01.15թ. - 31.12.15թ.	31 դեկտեմբերի 2016թ.	31 դեկտեմբերի 2015թ.
Տրված փոխառություններ				
Վերջնական մայր կազմակերպություն	408,433	416,869	12,202,183	12,197,392

Կապակցված կողմին տրված փոխառության նկատմամբ կիրառվում է տարեկան 3.4% տոկոսադրույք, և փոխառությունը ենթակա է մարման 2018թ. մայիսին: